

## Ամայա ՍԱՐԳՈՅԱՆ

### ԾԱՌԵՐԻ ՊԱՇԱՍՈՒԽՆՁԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՅ ՀԱՎԱՏԱԼԻՔԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Հնագիտական և մատենագրական տվյալների հավաստմամբ՝ Հայկական լեռնաշխարհը վաղ անցյալում բավականին հարուստ է եղել անտառներով, և որոշ արժեքավոր փայտատեսակներ նույնիսկ արտահանվել են տարրեր երկրներ՝ հնագույն Միջազգետք, Եգիպտոս, անտիկ Հունաստան և այլուր:

Հայաստանի տարածքից հայտնաբերված մշակութային հուշարձանները վկայում են, որ փայտը մարդու կյանքում չափազանց մեծ դեր է կատարել, և, տակավին խոր հնադարից, մարդկանց գիտակցության մեջ որոշակի պատկերացումներ են ձևավորվել բուսական աշխարհի, մասնավորապես ծառերի նկատմամբ:

Բուսական աշխարհի պաշտամունքը, իմքով կապվելով տուտեմիստական՝ ծառ-տոտեն, ինչպես նաև անիմիստական՝ ծառ-ոգիների բնակատեղի, ծառ-ֆետիշ, ծառ-պտղաբերություն մարմնավորող պատկերացումների հետ, դիտվել է երկրագնդի տարրեր ցեղերի և ժողովորդների մեջ՝ պարզունակ կամ զարգացած ձևերով:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, բուսական աշխարհի պաշտամունքը պայմանավորվել է այս հանգամանքով, որ մարդկանց կյանքը, գոյությունը կախված է եղել անտառներից, դաշտերի բերքի ու կերի առատությունից<sup>1</sup>, ծառերը մարդկանց զենքերի ու գործիքների, բնակարանի ու սննդի նյութ են տվել, իսկ կրակի հայտնագործումից հետո՝ նաև վառելափայտ<sup>2</sup>, զանազան ծիսակատարությունների ժամանակ տարրեր բույսերի կիրառումը նպատակ է հետապնդել բացահայտելու և օգտագործելու դրանցում քարենած զորեղ ուժերը<sup>3</sup> և այլն:

Հնդեվրոպական ժողովորդների արհական ճյուղի հնագույն կրոնում ծառերի պաշտամունքի մեծ դերի վկայություն է այն, որ իրանական «yazd» (աստված) տերմինն ըստ էության նշանակել է բարձր ծառ՝ հաճարենի կամ կաղնի<sup>4</sup>, գերմանների հնագույն սրբավայրերը եղել են անտառները<sup>5</sup>, դրոխների մեջ «սրբավայր» նշանակող բառը նույնական է լատ. «nemus» («աստրակ») կամ «անտառուղի») բառի հետ<sup>6</sup>:

Այնամենայնիվ, բուսական աշխարհի և հատկապես ծառերի պաշտամունքի հիմնական նախապայմանը, ըստ երևոյթին, դրանց պտղաբերության անտառ ուժն է եղել: Մեր նախնիների պատկերացումներում ծառն արմատացել է որպես պտղաբերության, առատության, զարման զարքոնքի, մի խոսքով՝ կյանքի խորհրդանիշ, որն արձագանքներ է գտել տարրեր ծեսերում ու սովորություններում<sup>7</sup>:

Հնագույն դարաշրջաններում հայոց բուսական աշխարհի, հատկապես ծառապաշտության մասին հիշատակելով, Մովսես Խորենացին նշել է, որ հնում Արմավիրում գտնվող սրբազն համարվող սոսի ծառերի տերևների սոսակյունով

<sup>1</sup> Г. Гаджев, *Культ природы и обряды, связанные с производственно - хозяйственной деятельностью у лезгин в прошлом.- Хозяйство, материальная культура и быт народов Дагестана в XIX-XXвв.*, Махачкала, 1977, стр 125:

<sup>2</sup> Д. Зелен и н. Тотемы- деревья в сказаниях и обрядах европейских народов, М-Л., 1937, стр 20:

<sup>3</sup> В.Пропп, *Русские аграрные праздники*. Л., 1963, стр. 66:

<sup>4</sup> Евг. Карапетян, *Культ фетишей, растений и животных в древней Греции*, ЖМНП, (այսու՝ Журнал Министерства народного просвещения), գ. 40, СПб, 1912, էջ 317(ըստ Ն.Զա.Սաղի):

<sup>5</sup> Զ. Ֆրեզեր, *Ասկե ճուղը*, Եր., 1989, էջ 135:

<sup>6</sup> Անդ, էջ 136:

<sup>7</sup> Ա.Սարգսյան, Ծառի և փայտամշակման հետ կապված ժողովրդական հավատայիքները հայոց մեջ (XIXդ. Ակես-XXդ. սկիզբ).- Հայաստանի բնակչության հասարակական կնցաղի և հոգևոր մշակությի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նոտաշրջան: Զեկուցումների թեզիսներ, Եր., 1985, էջ 47-49:

հայոց աշխարհում գուշակություններ են արվել<sup>8</sup>: Ազգագրական նյութի հավաստմամբ՝ ծառապաշտությունը հայոց մեջ այս կամ այն դրսերումներով պահպանվել է ընդհուպ XIX-XX դդ., ընդ որում, հատկապես պաշտվել է փոշնի ծառը, որի պաշտամունքն ուղղակի համահայկական բնույթ է կրել՝ ժողովրդի մեջ անվանվելով «սուրբ ծառ», «խաչ ծառ», «դարդամի ծառ» (դրամից պատրաստված չար- խափան պահպանակդարձանի անունով)<sup>9</sup>: Այնուհետև՝ առավել պաշտվել է կաղնին, ընդ որում, հայոց մեջ ամենուրեք, համարյա յուրաքանչյուր պրավայրի կամ ուստատելու մոտ եղել է անպայման մեկ կամ մի քանի տորք համարվող կաղնի ծառ<sup>10</sup>: Ուշագրավ է, որ կաղնու պաշտամունքը դիտվել է երկրագնդի տարրեր ժողովուրդների մեջ<sup>11</sup>: Երկրագնդել են նաև սոսին, բարդին, ուռենին, թխնին, թեղին, բոխենին, հաճարենին, զիկին, ընկուզենին, մասրենին, սալրենին, վայրի խնճորենին, տանձենին և այլն<sup>12</sup>: Հայոց մեջ հատկապես մեծ պաշտամունքի է արժանացել բարդի ծառը դեռևս հնագոյն դարաշրջաններից: Այսպես, Ներսես Ծննդիալը Վկայությամբ, Սամնաստ քաղաքի հայ աղանդավորների՝ արևորդների մեջ 12-րդ դ. պահպանվել էր բարդի ծառի հնավանդ պաշտամունքը<sup>13</sup>: Բարդի ծառի պաշտամունքի հետավոր արձագանքները հայոց մեջ հասել են ընդհուպ XIX-XX դդ.: Ներքին Բասենում հատկապես կանայք են պաշտել այդ ծառը: Աղջիկներն իրենց մազակապերից կապել են ծառի բնին՝ «քախսոր բացվելու», կանայք՝ իրենց մեջքի գոտին՝ պատղավորվելու ակնկալիքով<sup>14</sup>: Ալեքսանդրապոլս (Կոմայիր՝ Շիրակ) հիվանդություններից ապարհնվելու և երեխա ունենալու ակնկալիքով կանայք սուրբ համարվող բարդի ծառի շուրջը երեք անգամ պտտվել են և գունավոր թելեր ու լաթեր կախել դրամից<sup>15</sup>:

Ուշագրավ է, որ ծառերի պաշտամունքը դիտվել է Հայաստանի բոլոր պատմազգագրական մարզերում՝ Վասպուրականում, Սուշում (Տուրուբերան), Գողթան զավառում (Խախիջևան), Վարանդայում (Արցախ), Գանձակում (Ուտիք), Բորչալուի զավառում (Լոռի), Գեղարքունիքում, Սյունիքում և հայաշատ այլ վայրերում<sup>16</sup>: Սիանի համշենահայերի մեջ «սուրբ ծառ» հասկացություն չի դիտվել, թեպես նրանց մեջ էլ որոշակի հավատալիքներ են ձևավորվել այս կամ այն ծառատեսակի օգտակարության կամ վնասակարության մասին<sup>17</sup>:

Ազգագրական նյութի հավաստմամբ՝ հայոց մեջ տարածված է եղել ոչ միայն «սուրբ» ծառերի, այլև «արքազան պուրակների» պաշտամունքը: Հնագոյն պուրակն այդ առումով տեսկվել է Հայկի որդի Արամանյակի կողմից, մոտ երկու հազար տարի առաջ, Արաքս գետի ափին, ոչ հեռու այն վայրից, որը հետագայում նրա որդի Արամայիսը կառուցել է Արմավիր քաղաքը՝ Հայաստանի առաջին և հնագոյն մայրաքաղաքը<sup>18</sup>: Վասպուրականում ննան քազմաքիլ պուրակներ են եղել<sup>19</sup>, Սշո-

<sup>8</sup> Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիկիսի, 1913, էջ 64: (Հմնու. հնագոյն Հունաստանում Դոդոնյան անտառի կաղնու ստափյունով իին հույների արած գուշակությունների հետ. Ալանդ Ալիշան, Հիմ հասար կամ հերանսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 420):

<sup>9</sup> Ա.Ս ա թ գ և յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ)- 81, տ. I-IV (Տավուշ), ԴԱՆ-83, տ. I-VI (Լոռի), ԴԱՆ-86, տ. I-VII (Սյունիք):

<sup>10</sup> ԴԱՆ-81, տ. I-III, ԴԱՆ-83, տ. I, II, IV-VI, ԴԱՆ-86, տ. I-IV, VI:

<sup>11</sup> Զ.Ֆ թ ե զ ե թ, Ց.Վ.աշխ., էջ 193-196, Եվր.Կարաօվ, Ց.Վ. աշխ., էջ 322-333:

<sup>12</sup> ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I, III-IV, VI, ԴԱՆ-86, տ. I-IV, VI:

<sup>13</sup> Հ.Է մ և հ, Օչերки религии и верований языческих армян, М., 1864, էջ 58, Վլոնդ Ալիշան, Ց.Վ. աշխ., էջ 102-103, Ա.Ալաքեյսի, Հայ ժողովուրդի մատավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 1, Եր., 1959, էջ 87:

<sup>14</sup> Գ.Հ ա կ ո ր յ ա ն, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 264:

<sup>15</sup> Կ.Ս ե ղ թ ո ս յ ա ն, Արենատավորական ավանդությունները և դրանց արտահայտությունները լեմինականացների կենցարում.- Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսու՝ ՀԱԲ), պր. 6, Եր., 1974, էջ 235:

<sup>16</sup> Տես մասնավորական Ազգագրական հանդեսի (այսու՝ ԱՀ) գրեթե բոլոր գրքերը:

<sup>17</sup> Յ. Մ ո ւ թ ե ա ն ց, Համշենցի հայեր.- ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 118:

<sup>18</sup> Հ.Է մ և հ, Ց.Վ. աշխ., էջ 57:

<sup>19</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Վասպուրական, ԱՀ, գ. 25, Թիֆլիս, 1913, էջ 38-40:

Հարք զավառում երեք սրբազն և անձեռնմխելի անտառակ, հիմնականում՝ նորդենիների<sup>20</sup>, Դերսիմում՝ հսկա արտուճների հնաղարյան պորակը սրբազն է համարվել<sup>21</sup> և այլն:

Որոշակի ծառատեսակների սրբացումը, պաշտումը, երկրպագումը, դրանց գրհաբերություններ անելը ինչպես հայոց, այնպես էլ այլ ժողովրդների մեջ որոշակի մեկնարանություններ է ստացել: Ինչպես նշվեց, սրբազն համարվող ծառերի տերևների տոսափյունով գուշակություններ են արվել, ըստ Ղևոնդ Ալիշանի՝ ծառերը պաշտվել են իրենց օգտակարության համար<sup>22</sup>, նաև՝ հատկապես միայնակ, բարձունքներում և անմատչելի վայրերում աճած ծառերը և պորակները, սուրբ են համարվել հատկապես այն ծառերը, որոնց վրա արագինները բոյն են հյուսեր: Ազգագրական հյուրի հավատմանը՝ հայոց, ինչպես նաև այլ ժողովրդների մեջ սրբացվել և հատկապես պաշտվել են կայծակնահար ծառերը<sup>23</sup>: Քրիստոնեության առաջացման հետ ծառերի պաշտամունքի առումով բնապաշտական հավատալիքները վերախմաստավորվում են, միահյուսվում են հեթանոսական և քրիստոնեական հավատալիքները, ծեսերն ու սովորույթները, ավանդություններում «սուրբ» ծառերը սկսում են կապվել Ըքիստոսի և նրա առաջըամերի հետ, ծառերի երկրպագումը պայմանավորվում է խաչի, խաչքարի, մատուի, եկեղեցու նոտ գտնվելու հանգամանքով, այստեղից և, ըստ Երևանյին, դրանց անվանումները՝ Կաղմի-Խաչ, Խնձորախաչ և այլն: Այնուամենայնիվ, սրբավայրերից հեռու ընկած պաշտվող մենավոր ծառերը վկայությունն են բնապաշտական այն հեռավոր արձագանքների, երբ ծառը պաշտվել է ինքնին՝ որպես պտղաբերության, արգասավորության, կյանքի խորհրդանիշ: Հեթանոսական և քրիստոնեական հավատալիքների սերտ միահյուսման վկայություն է նաև այն, որ հայ եկեղեցական կանոններում արգելվել է կտրել ծառը, եթե այն ինչ-որ մենական մեջ մեռավոր է<sup>24</sup>:

Ուշագրավ է, որ ծառերի սրբացմանն ու երկրպագմանը զուգահեռ, հայոց մեջ սնահավատություններ են առաջացել որոշակի ծառերի վնասակարության, անհաջողություններ ու իիվանդություններ պատճառելու առումով։ Հատկապես ընկույզնու վնասակարության մասին որոշակի հավատալիքներ են ձևակորպել Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում և հայաբնակ տարբեր վայրերում՝ ընկույզնու ստվերում նատելը վտանգավոր է համարվել, ընկույզնի տնկելը, նաև կորելը՝ անհաջողություն, իրվանդություն, նույնիսկ մաս է զուժել։ Հետաքրքիր է, որ նման սնահավատությունները նաև ռացիոնալ հասիկ ենապարունակում ընկույզնին կլանում է թթվածինը և արտադրում ածխաբը զաք։ Ընդ որում, հատկապես ընկույզնու վնասակարության առումով որոշակի հավատալիքներ են ձևակորպել կովկասյան, միջինասիհական և այլ ժողովուրությունների մեջ։

Որոշակի ծառատեսակների վնասակարության մտայնությունը դիտվել է դեռև հին Հնագույնաբնույն, որտեղ, օր. կարմրածաղք (կենի) համարվել է ստորեկյալ աստվածներին նվիրված ծառ, այն հաճախ տնկվել է գերեզմանների վրա և բառ այդմ՝

<sup>20</sup> Քենակը պահպանվում է Հայոց պատմության պատմական գրադարանում, ԱՀ. գ. Զ, թիվից 1900, էջ 39:

<sup>21</sup> Գ. Հայաստանի հայերի ազգագրությունը. մ. ԱՀԱԲ, ար. 5, Եր., 1973, էջ 138:

<sup>22</sup> Ղ. Արի՞ ամեն, բարեկարգություն է առ 75:

<sup>23</sup> б. *Лаштупъшъ Азъ, 1897, № 203* (такъ бывъ *Б. Лаштупъшъ, Бѣлѣвъ, h. 2, бр., 1898, № 402-202), Ч.Рѣпнъшъ, Бѣлѣвъщадъшъ Мѣдѣнъшъръ Священныя рощи и деревья у кавказскихъ народовъ, ИКОРГО (шутъ *Извѣстія Кавказскаго отдѣла Россійскаго географическаго общества*), т. 5, 1878, 3, № 161:*

<sup>24</sup> Евг.К а г а р о в , նշվ. աշխ., էջ 317-318 (ըստ Ն.Մատի): «Հմատ. ի հեկապրոյք այլ ժողովորդների, որոնցում նևան դեպքերում «մեղափոր» ծառը կարե են: Այսպիս Հարավային Ասիայում, եթե մարդը ծառից բռկնելով մահացել է, երա հարազատները որպես փոխհատուցում ծառը կարե են և վերածել տաշենելորի (անը՝ Է.Տայլոր, *Первобогатая культура*, թ. I, СПб, 1896, էջ 254-255), Հարավային Ասիակի կայի հեղկացիները, եթե մարդը ծառից բռկնելով մահացել է, ապա հաստոկ ծեսերով ու արարություններով կարե են ծառը, իունական դաստիարակության մասին մեջ մեղափոր քարը կամ փայտի կտորը, և դրանք երապարակայնորեն նետովի են երկրի սահմաններից դուրս (տե՛ս Յ.Լուս, *Происхождение вещей. Из истории культуры человечества*, М., 1954, стр 361, 362)»

համարվել չարագուշակ ծառ<sup>25</sup>: Ըստ Թեոֆրաստի, հնարավոր է, որ Հունաստանում շատ տարածված գայլուկարդի ծառը (կենուն շատ նման) համարվել է դժբախտություն բերող, խորհուրդ չեն տվել այն տուն տանել: Այնուղիւ, որտեղ աճում է այդ ծառը, դժվարությանը են ծնվում և դժվար են մեռնում<sup>26</sup>:

Այնուամենայինվ, պատմազգագրական նյութի հավաստմամբ, հայոց, ինչպես նաև այլ ժողովուրդների մեջ հիմնականում դիտվել է ծառերի սրբացում, երկրպագում, դրանց զիհարերությունների նախացում, դրանցից երկնչում, և, տակավին խոր հնադարից, որոշակի պատկերացումներ են ձևավորվել «սուրբ», սրբացված ծառերի անձեռնմխելիության առումով, որի արձագանքները հայոց մեջ պահպանվել են ընդհուպ XIX-XXդդ.<sup>27</sup>: Բազմաթիվ ավանդություններ են պահպանվել նման ծառերի կտրման արգելքի առումով, ըստ որոնց՝ «սուրբ» ծառը կտրողը կամ թեկուզ դրանից մի ճյուղ կամ տերև պոկողը խստագույնս պատճել է՝ կուրացել է, դիվահարվել, ճախորդությունների հանդիպական հիմնարքացել և նոյնիսկ մահացել է, իսկ նրա սերտները ոչնչացել է, ընդ որում՝ արգելվել է նոյնիսկ բախված չոր ճյուղերը հավաքել որպես վատելափայտ<sup>28</sup>:

Ուշագրավ է, որ հայոց մեջ ծառ կտրողը որոշակի պատճի է արժանացել նաև օրենքով, և այն արտացոլում է զուել դատաստանագրքերում: Այսպես, ըստ Միհրար Գոշի՝ Դատաստանագրքի, ... սատանայի դրդմամբ ծառ կտրողին պետք էր դատել, և պատիժն այսպիսին է եղել՝ պետք է հաշվել, թե ծառը քանի տարի բերք չի տա, և այդ ամբողջ արժեքը գանձել կտրողից<sup>29</sup>: Ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի, ... եթե մենքը կտրեր ուրիշին պատկանող պտղատու ծառը, ապա տուժողի այզում պետք է տնկեր մի մատղաշ ծառ և խնամեր ու մշակեր այնքան, մինչև ծառը հասներ կտրածի տարիքին<sup>30</sup>: Ըստ ավանդության, Ծննդոց անտարից թեկուզ մի ծառ կտրողը Երվանդ արքայի հրամանով նետվել է հանցանաց խուզ... և մեկ տարով զրկվել հաց ստանալու իրավունքից՝ «ծառը բնուրյան համար նույն է, ինչ մարոր համար հացը» նտայնությամբ<sup>31</sup>:

Այնուամենայինվ, հայոց մեջ սուրբ համարվող ծառերից, հատկապես փոշնուց պահպանակ-դաղդղաներ, նաև՝ որոշակի առարկաներ են պատրաստվել (օր., արորի լուծը կամ գոնե սանիները), որոնք կոչված են եղել պահպանելու չար ուժերի, «չար աշքի» ազդեցությունից<sup>32</sup>: Ըստ երևոյթին, «սուրբ» ծառեր կամ դրանցից ճյուղեր կտրելիս անցյալում արարողություններ, ծխակատարություններ ու զրիարերություններ են արվել, աղոքքներ ասվել, որոնք ժողովրդի հիշողության մեջ չեն պահպանվել<sup>33</sup>:

Ազգագրական նյութի հավաստմամբ՝ «սուրբ» ծառերի ու պուրակների անձեռնմխելիության գաղափարը դիտվել է երկրագնդի տարեր ժողովրդների մեջ՝ հիմնարքությունների, ճախորդությունների, մահվան սպառնալիքով արգելվել է դրանք

<sup>25</sup>Փ ե օ ֆ ր ա ս տ, Ասկլեպիոս և այլ հայություններում պահպանակ ծառերի մասին պատմություններ, Վ. Ա. Տիգրանյան, 1951, էջ 410:

<sup>26</sup>Անդ, էջ 96:

<sup>27</sup>Ա.Ս ա ր զ ս յ ա ն, ճշգ. աշխ. էջ 48, ԴԱՆ-81, տ. I, III-IV, ԴԱՆ-83, տ. II, V-VI, ԴԱՆ-86, տ. I-III, V-VI:

<sup>28</sup>Ե.Լ ա լ ա յ ե ա ն, Բորչալուի գալատ.- ԱՀ, գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 186, Գանձակի գալատ.- ԱՀ, գ. 2, Թիֆլիս, 1900, էջ 335-337(տես նաև՝ Ե. Լապայան, Երկեր, հ. 2, էջ 203-487), Վասպուրական.- ԱՀ, գ. 25, Թիֆլիս, 1913, էջ 38, 40, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 198; Բենսէ, Բուլանդիս կամ Հարք գալատ.- ԱՀ, գ. Զ, էջ 39:

<sup>29</sup>Հայկ Խոչաստրյան, Սույսա անտառ, Եր., 1988, էջ 221:

<sup>30</sup>Անդ, էջ 220:

<sup>31</sup>Հայկ Խոչաստրյան, Հայապատում, Եր., 1984, էջ 41:

<sup>32</sup>ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:

<sup>33</sup>ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI: Հմնություն աշխարհում, հատկապես ս. Կարպետությունի վաճքի շորջը համախ հանդիպող «օշտակ աճումով բռյալ մը» ... ամենայն հիմնարքությունների բռիմիք է, «որոյ արմատը մարդանման կը համրաւեն... այս արմատը հանելու համար յատուկ աղոքք մը ունին. և թէ՝ եթք կը կտրեն իւր միս կտրոններէն, ահազին ձայնով կը ճշայ. ուլ մը կամ հաւ մը կը կապեն այդ մարդարմատի, որպէս զի եթք ճշայ՝ այն ուլը կամ հաւը անոր ձայնին զոհ լինի. եթէ այդ հնարքը չլինի, արմատ հանող մարդը պիտի մետնի». - Գ. Սրուանձտեանց, Գրոց ու Բրոց եւ Դաւիթ կամ Միհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 32:

Կտրել կամ դրանցից ճյուղեր ու տերևներ պոլել: Թե ինչ մեծ տեղ է տրվել ծառերի պաշտամունքին, կարելի է դասել այն պատժի դաժանությունից, որին գերմաների օրենքով ենքակա եղել ամեն ոք, ով կհամարձակվեր պոլել կանգուն ծառի կտուկը<sup>34</sup>, ընդ որում, ըստ ժողովրդական հավատալիքների, դրանց կտրման դեաքում ոչ միայն կտրողը կամ նրա սերունդն է պատժել, այլ նաև կարող էին առաջանալ տարերային աղեստներ՝ ամպրոպ, կարկուտ, ջրիեղեղ և այլն:

Կովկասյան որոշ ժողովուրդների մեջ արգելվել է նույնիսկ նման «սուրբ» պուրակներ մտնելը, բացի տոն օրերից կամ տվյալ սրբին նվիրված տոներից, անձեռնխելի են համարվել նաև նման պուրակներում կամանտառներում զտնված կենդանիները, ինչպես նաև՝ այնտեղ ապաստանած հանցագործները<sup>35</sup>, ըստ երևույթին այն մտայնությամբ, որ «սուրբ» պուրակներն իրենց անձեռնխելիությունը հաղորդել են այդուղ հովանափրություն փնտրող մարդկանց:

Այնուամենայմիվ, որոշակի տոների ու արարողությունների ժամանակ կտրվել են սրբացված ծառերը զանազան ծիսակատարություններով՝ նախապես մոմեր վատելով, զոհեր մատուցելով (ծառը կտրելու ծիսական բողտվություն):

Հայոց մեջ հնուց ի վեր, ըստ ժողովրդական հավատալիքների, «սուրբ» ծառերն օժտված են եղել որոշակի հատկություններով, մի կողմից՝ պատղաբերելու ունակություն հաղորդելու և բուժիչ, մյուս կողմից՝ չար ուժերի, «չար աշխի» ազդեցությունից, զանազան անհաջողություններից ու ճախորդություններից պահպանելու օժտվածությամբ դրանց ճյուղերի կամ դրանցից պատրաստված պահպանակ-հմայիլների օգնությամբ: Սրբազն ծառերի հետ կապված պատղաբերության պաշտամունքի արձագանքները պահպանվել են ընդհուպ XIX-XXդդ. Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում, որոնցում զանազան ծեսերով ու արարողություններով, հմայական միջոցներով աշխատել են ապահովել պատղաբերությունը: Այդ մտայնությամբ նման ծառերին ուստա են գնացել, մատառ արել, մոմ վառել, կանաչ-կարմիր թելեր կամ հազուսի որոշ մաս կապելայդ ծառերից<sup>36</sup>:

Պատղաբերելու ակնկալիքով, Հայաստանի որոշ շրջաններում ամուլ կանայք իրենց գոտիներն են կապել ծառի բնին կամ ծառի բնի և ճյուղերի միջև գոյացած անցքով երեք անգամ անցել են և կամ՝ ծառերի ճյուղերից ճանք են կապել, տիկնիկ դրել մեջն ու օրորել<sup>37</sup> և այլն:

Պատղաբերության պաշտամունքի հետ սերտորեն կապված է հայոց մեջ ամենուրեք հարասնյաց ծիսակատարության ժամանակ հանդես եկող հարսանեկան ծառը (ուրց, ուռք, նորձ, փոփիս), որը երիտասարդ գոյգերի պատղաբերության ծիսահմայական խորհուրդ է պարունակել: Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում ուշագրավ սպիրույր է դիտարկվել՝ ծառերի բերքատվությունը խրանչը նպատակով դիմել են շատ հետաքրքիր ծեսի՝ կացնով հարձակում են գործել պտուղ շտվող ծառի վրա՝ կտրելու սպասնակիքով (հատկապես Մեծ Պատի Ավագ շրեթշարքի օրը, Ամանորի գիշերը, Ծաղկազարդին)՝ անպտուղ ծառի պատղափորման ակնկալիքով<sup>38</sup>: Հայոց մեջ ամենուրեք դիտվող այս ծեսում պատղաբերության հետ առնչվող նոյն մտայնությունն է դիտվել՝ ծիսահմայական եղանակներով ապահովելու ծառի պատղաբերությունը, խրանչերու բերքատվությունը, ընդ որում, հայոց մեջ այնքան մեծ է եղել հավատն այդ առունուլ, որ նույնիսկ բազմաթիվ ավանդություններ են պահպանվել նման ծեսից հետո անպտուղ ծառերի պատղափորման մասին: Ուշագրավ է, որ այս սովորույթը դիտվել է

<sup>34</sup> Զ.Ֆ. Ե գ ե ր, Աշխ. աշխ., էջ 136:

<sup>35</sup> Е.В ե յ ձ ե հ բ ա յ մ, Աշխ. աշխ., էջ 165-167, Կ. Շ. Գլավանի, Օписание Черкесии.- Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այս՝ СМОМПК), вып. 17, Тифлис, 1893, стр 157:

<sup>36</sup> ԴԱՆ-81, ալ. I, III, ԴԱՆ-83, ալ. I, III-IV, VI, ԴԱՆ-86, ալ. I-IV, VI:

<sup>37</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Տղարերի սպորտությունների զարգացումը հայոց մեջ.- Տեղեկագիր ՀԱԽՀ ԳԱ գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1931, թիվ 5, էջ 123, Նոյնը, Բորչարդի գալաք.- ԱՀ, գ. 10, էջ 185:

<sup>38</sup> Ս. Լ ի ս ի ց յ ա ն, Զանգեզորի հայերը, Եր., 1969, էջ 272; Ե. Լալայեան, Զանգեզոր.- ԱՀ, գ.

Դ, թիվ 2, Թիֆլիս, 1898, էջ 110, Վարդադա.- ԱՀ, գ. Բ, էջ 243, Գանձակի գալաք.- ԱՀ, գ. Զ, էջ 335, Յ. Սուրաղեանց, Համշենցի հայեր, էջ 157:

նաև տարբեր էթնիկական համբույքների մեջ՝ Կովկասում, Եվրոպական շատ ժողովուրդների մեջ, ճապոնիայում, մալյայացիների մեջ և այլրար, նույն մտայնությամբ՝ ծիսա-հնայական տարբեր եղանակներով նպաստելու ժամերի պտղավորմանն ու բերքատվությանը: Ըստ ժողովրդական հավատալիքների, «սուրբ» ծառերն օժտված են եղել նաև զանազան հիվանդություններ բուժելու հատկությամբ, հավատք, որ հայոց մեջ դիտվել է ամենուրեք, ընդ որում, որոշ ծառերին վերագրվել է միայն մեկ, որոշակի հիվանդություն, մյուսներին՝ ամենայն հիվանդություններ բուժելու հատկություն<sup>39</sup>: Հետագայում, արդեն քրիստոնեական վերախմաստավորմամբ, բուժիչ զորությունը հիմնականում վերագրվել է տվյալ սրբավայրին՝ «խաչ»-ին, թեպետ սրբավայրերի մերձակայքի ծառերը դարձյալ «սուրբ» և անձեռնմխելի են համարվել<sup>40</sup>:

Հայոց մեջ հավատք էր ստեղծվել նաև, որ «սուրբ» ծառերի միջոցով կարող են ձերքագատվել ամենասարբեր փորձություններից, նման ծառերին զրհաբերություններ անելով կարող են կամսվել աղտաները (երաշտ, կարկտահարություն, հեղեղ, նորեխ և այլն), կարող են անձրև կամ արև հայցել և այլն: Ընդ որում, այն հավասով, որ նման ծառերն իրենց «սրբությունը» պահպանել են նաև չորանալոց հետո, պաշտվել են նույնիսկ տապալվածները, դրանց մոտ մոտ են վառել, աղոթել, բների փոտած փոշին ջրի մեջ լուծելով, խմեցրել են հիվանդներին՝ ապաքինման ակնկալիքով<sup>41</sup>:

Ծառերի պաշտամունքի վկայություն է այն երևույթը, որ դրանց աշխատել են պահպանել «չար աչքի», չար ուժերի ազդեցությունից, ուստի պտղատու ծառերին զանազան աշքահույսներ են կախել<sup>42</sup>:

Ծառերի պաշտամունքը արտահայտություն է գտնել ժողովրդական որոշ տոներում՝ Նավասարդ, Տյառնենառաջ, Ծաղկագարդ, Համբարձում կապված բնության զարթոնքի, պտղաբերության, սերմի, պտղի, թերքի և ընդհանրապես կյանքի զաղափարի հետ՝ հետագայում արդեն քրիստոնեական վերախմաստավորմամբ: Այսինք, Տյառնենառաջին, որը բնության զարթոնքի տոն է համարվել, ծիսահնայական զանազան արարողություններով աշխատել են պահովել բերքատվությունը, առատությունն ու հաջողությունը ողջ տարվա ընթացքում: Այդ նպատակով Տյառնենառաջին վառվող խարույկի խանձողները, որոնց սրբազն զորություն է վերագրվել, որվել են տան տարբեր մասերում, խարույկի միջինք զարնանը շաղ են տվել արտերում, ջրի մեջ լուծելով խմեցրել են հիվանդներին և այլն<sup>43</sup>:

Ծաղկագարդի՝ բնության, զարնան զարթոնքին նվիրված տոնակատարության ծիսական արարողություններում ողջ հայոց աշխարհում խորիրդանշական ծառ է եղել ուռենին, ամենուրեք օրինվել են ուռենու նորաքորոց ճյուղերը (միայն Կիլիկիայում եկեղեցի են գնացել ձիենու ճյուղերով): Ուռենու օրինված ճյուղերով զարդարել են տները, դրանք դրել են հացահատիկի շտեմարանի մեջ, կամսել խնոցու վրա և այլն՝ առատության ակնկալիքով<sup>44</sup>: Եվ ընդհանրապես, հայոց մեջ ժողովրդական տարբեր տոնակատարությունները մշտապես ուղեկցվել են կանաչ ծառերով, ճյուղերով, ծաղիկներով, որոնք առատության, հաջողության, երջանկության խորիրդանշներ են համարվել:

<sup>39</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Վասպուրական.- ԱՀ, գ. 25, էջ 287, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 201, Գանձակի զատառ, էջ 354, Նոր-Բայազետի զատառ.- ԱՀ, գ. 17, թիվ 1, Թիֆլիս, 1908, էջ 124:

<sup>40</sup> ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:

<sup>41</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Բորջարուի զատառ.- ԱՀ, գ. 10, էջ 186, Գանձակի զատառ.- ԱՀ, գ. Զ, էջ 336, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 174, ԴԱՆ-83, տ. I-IV, VI, ԴԱՆ-86, տ. I, III, VI:

<sup>42</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Վասպուրական.- ԱՀ, գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 201, A..Իսրայել, Արմանական բնություններու հաջողությունները մշտապես ուղեկցվել են կանաչ ծառերով, ճյուղերով, ծաղիկներով, որոնք առատության, հաջողության, երջանկության խորիրդանշներ են համարվել:

<sup>43</sup> Գ. Ս ր ո ւ ի ա ն ձ տ ե ա ն ց, Մանամա, Կ. Պոլիս, 1876, էջ 108-109, Ս. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկը).- ՀԱԲ, պր. 12, Եր., 1981, էջ 70 (տես նաև՝ C. Լիսիցյան, Արմանե Հայոց Կարաբախ. Էթնոգրաֆիческий очерк, Ер., 1992), Վ. Բրոյան, նշվ. աշխ., էջ 487:

<sup>44</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Զանգեզոր.- ԱՀ, գ. Դ, թիվ 2, էջ 109, Զատախը, ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 269 (տես նաև՝ Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 33-412), Վարանդա.- ԱՀ, գ. Գ, թիվ 1, Թիֆլիս, 1898, էջ 344-345, Բորջարուի զատառ.- ԱՀ, գ. 10, էջ 260:

Հայկական լեռնաշխարհում բուսական աշխարհի, մասնավորապես ծառերի պաշտամունքն արտացոլում է գուել ժայռապտուկերմերում, ինչպես նաև մշակութային տարրեր շերտերից հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձաններում՝ Քիայնայի (Ուրարտու) տարածքից հայտնաբերված կնիքների, խեցեղենի, բրոնզե գոտիների, սաղավարտների, ռազմակառքերի և այլնի վրա՝ կենաց ծառերի պատկերներով, իիմնականում ոճավորված: Կենաց ծառերի պատկերներ են հանդիպում միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, գրակալների, հայկական գորգերի ու կարպետների վրա, մանրանկարչության մեջ և այլուր՝ որպես կյանքի, պտղաբերության, առատության խորհրդանշ:

Հայոց մեջ բուսականության պաշտամունքի հետ կապված առվորույթներն ու ծեսերը, անցնելով զարգացման երկարատև ուղի, դարերի ընթացքում որոշակիորեն վերափոխվելով ձևի ու բովանդակության առումով, քրիստոնեական ծիսակարգի ազդեցությամբ վերափոխվելով, այս կամ այն տարրերակներով պահպանվել են ընդհուպ XIX-XX դր., մինչև մեր օրերը: Հայաստանի տարրեր պատմազգագրական մարգերում մինչ օրս ել կարելի է հանդիպել խաչքարի, մատուիի, եկեղեցու շրջակայքում լարերով ծածկված բազմաթիվ ծառեր, որոնց մոտ մոտ են վառում, արդրում, դրանց զոհերը են մատուցում՝ իիվանդություններից ապաքինվելու, հաջողության ակնկալիքով<sup>45</sup>: Ծառապաշտության վերապրուկ է նաև տարենուի տոնին տները կանաչ ծառերով զարդարելու սովորույթը, որը բազում տարրերակներով հաղիպում է աշխարհի տարրեր ժողովուրդների մեջ:

Եվ, ինչպես դեռևս հին հոյերն էին կարծում, թե մարդիկ, որոնք ծառեր են խնամում, վայելում են Դրիասների՝ ծառերի հովանակոր նիմֆաների հասուկ հովանավորությունը<sup>46</sup>, այսօր էլ բուսականության դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում ամենակին չի նկազել, և իզուր չէ ժողովով մեջ ասվում, որ եթե դու թեկուած մեկ ծառ ես տնկել կյանքում, ապա կյանքը իզուր չի անցել:

## КУЛЬТ ДЕРЕВЬЕВ В СИСТЕМЕ АРМЯНСКИХ ВЕРОВАНИЙ

-----*Резюме* -----

-----*A. Саркисян* -----

С древних времен у армян сформировались определенные верования, относящиеся к растительному миру и, в частности, к деревьям. Дереву поклонялись, его почитали как символ плодородия, изобилия, весеннего пробуждения, символ жизни, что и нашло свое отражение в различных народных ритуалах и обычаях.

Эти ритуалы и обычаи, пройдя длинный путь развития, претерпев на протяжении веков различные трансформации формы и смысла, переосмысливаясь под воздействием христианского вероисповедания, в той или иной вариации сохранились до наших дней.

В разных историко-этнографических регионах близ хачкаров, храмов и церквей и сегодня можно увидеть деревья, покрытые кусочками ткани, у которых ставят свечи, молятся, им приносят жертву во избавление от болезней и напастей, с надеждой на оплодотворение и всякую благость.

<sup>45</sup> Ա.Սարգսյան, Եղիշե, էջ 47-48, ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:

<sup>46</sup> Մ.Բուտիկինիկ, Ս.Կառապետիկ, Դիցանական բանապահ, Եր, 1985, էջ 65-66: